

փոխանցուէր ուրիշ վանքի. կ'արտօնէր չհասամուանութիւններ, ամուսնալուծութիւններ, կրկնամուսնութիւններ եւն. 3. ի վերջոյ սկսան «այլազգեաց իշխանութեամբ եւ իրր զարալաւոր հարկատու բռնանալ ի վերայ ժողովրդեան եւ առանց իրաւանց կեղեքեալ կողոպտէին զժողովուրդան» (Դաւր. 223—224) : Բայց դարձեալ հնարաւոր չեղաւ ոչ արքունի տուրքն տալ եւ ոչ իրենց սեպհական պէտքերն զոհացնել :

Անել դրութեան առջեւ յուսահատ՝ որոշեց Մելքիսեդեկ 1625ին փոխանցել կաթողիկոսական իշխանութիւնը իւր եղբորորդւոյն՝ Սահակ Գառնեցւոյն եւ փախչիլ արտասահման : Ձեռնադրեց զՍահակ կաթողիկոս, յայտնեց թղթով մը Շահին, թէ Աթուր պարտքերուն հետ փոխանցուած է Սահակին. իսկ ինքը ընկերակցութեամբ երկու եպիսկոպոսի անցաւ Օսմանեան սահմանը եւ Կարին-Կոստանդնուպոլիս գծով հասաւ ի Լվով (Լով, Լեմբերգ, Լէոպոլիս) Լեհաստանի (22 Ապրիլ 1626) : Այս տարւոյն Մայիս 10ին կ'օրինակէր Սիմէոն երէց ի խնդրոյ Էրզրումցի Անդրէաս քահանայի Հարցմանց գիրք մը¹⁵ «ի կաթողիկոսութեանն Հայոց մեծաց սուրբ Էջմիածնայ տէր Մելքիսեդեկին. զոր ի յայսմ վայրկեան ժամանակիս եկեալ Ըռզաց երկիրն ի քաղաքն որ կոչի Լէվ, յինանցն երկրորդում

¹⁵ Ս. Տէր-Աւետիսեան, Յուդակ հայ. Ձեռագրաց Ամենափրկիչ վանաց Նոր-Ջուղայի. Թ. 153 (անտիպ) :